



ՓՈԽՆՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

Հայաստանի Հանրապետության Տարածքային Կառավարման և զարգացման նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ)՝ ի դեմս իր երևանյան գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ) և «Հայ պետական ծառայողների միությունը» (այսուհետ՝ ՀՊԾՄ), համատեղ այսուհետ՝ Կողմեր,

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքային ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխման գործընթացի շարունակական բնույթը՝ միջազգային չափանիշների համապատասխանեցնելու, թափանցիկության և հրապարակայնության ապահովման անհրաժեշտությունից ելնելով,

Կարևորելով կոռուպցիոն ռիսկերի նվազեցման անհրաժեշտությունը և կոռուպցիոն ռիսկերի մասին հանրային իրազեկման բարձրացումը,

Նպաստելով ՀՀ համայնքային մարմինների աշխատակազմերում համայնքային ծառայողների (այսուհետ՝ համայնքային ծառայող) կողմից վարքագծի (էթիկայի) կանոնների պահպանման դերի և դրա չափանիշների հետևանքների նկատմամբ գիտակցության ձևավորմանը, ինչպես նաև համայնքային ծառայողների հակակոռուպցիոն ընկալման ձևավորմանը,

Կարևորելով քաղաքացիական ինստիտուտների և միջազգային կառույցների ներգրավվածությունը հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում,

Ընդգծելով կոռուպցիայի բացահայտման և հետապնդման ոլորտում համայնքային ծառայողների մասնագիտական և շարունակական վերապատրաստման գործընթացի կազմակերպումը՝ նաև միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների ուժերով,

Նպաստելով համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի բարեփոխումների ապահովմանը, համայնքային ծառայողների և քաղաքացիների փոխհարաբերությունների որակի բարելավմանը,

Առաջնորդվելով օրենքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքներով՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն միջոց,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 **Համագործակցության Նպատակները**

Կողմերը միավորում են ջանքերը հետևյալ նպատակներով՝

1) նպաստել համայնքային ծառայողների հակակոռուպցիոն ընկալման ձևավորմանը, կոռուպցիայի եւ կոռուպցիոն ռիսկերի մասին իրազեկմանը՝ «Ամբողջականության (Integrity) հիմունքները տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագրի (այսուհետ՝ վերապատրաստման ծրագիր) պարբերական իրականացման միջոցով,

2) աջակցել համայնքային ծառայողների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների, մասնավորապես՝ համայնքային ծառայողների և *քաղաքացիների միջև ծագած փոխհարաբերությունների որակի* բարձրացմանը՝ տեղական ինքնակառավարման մարմնի (այսուհետ՝ ՏԻՄ) անունից այդ գործառույթը իրականացնող համայնքային ծառայողների որակավորման բարձրացման միջոցով, նպաստել համայնքային ծառայողների մոտ գործնական հմտությունների խորացմանը,

3) նպաստել կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության թերությունների և բացերի վերհանմանը, առաջարկություններ ներկայացնել ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կիրառման առումով՝ ներառելով այդ փոփոխությունների նկարագրությունը վերապատրաստման ծրագրում,

4) աջակցել նախարարությունում քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև համայնքային ծառայողների վերապատրաստման, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու նպատակով անցկացվող մրցույթների մոնիտորինգի իրականացմանը՝ ապահովելով մոնիտորինգ անցկացնողների մասնագիտական բարձր պատրաստվածությունը եւ անհատական բարոյահոգեբանական հատկանիշները:

Հոդված 2 **Համագործակցության ուղղությունները**

2.1 Կողմերը համաձայնվում են ԵԱՀԿ կողմից ֆինանսավորված (ֆոնդերի առկայության պայմանով), Նախարարության և ՀՊԾՄ կողմից մշակված և կազմված վերապատրաստման ծրագիրը պարբերաբար իրականացնելու նպատակով ձեռնարկել սույն հոդվածի 2.2, 2.3 և 2.4-րդ մասերով սահմանված գործողությունները.

2.2 ԵԱՀԿ -ն՝

1) յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ ապահովում է վերապատրաստման ծրագրի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը, մասնավորապես՝

- դասախոսական կազմի վարձատրությունը՝ չորս դասախոս,
- սոցիոլոգ վերլուծաբանի կողմից ֆոկուս խմբի կազմակերպման և դրա արդյունքների համեմատական վերլուծության ծախսերը,
- վերապատրաստման ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտ այլ վարչական ծախսերը, այդ թվում՝ տպագրության, թարգմանության, հյուրասիրության, տարածքների և սարքավորումների հետ կապված ֆինանսական ծախսերը,

2) ներկայացնում է ԵԱՀԿ բյուջետային տարվա կտրվածքով տրամադրվելիք ֆինանսական միջոցների ժամանակացույցը,

3) վերապատրաստման գործընթացի հաշվետվության արդյունքներով մասնակցում և հանրայնացնում է համայնքային ծառայողներին տրամադրվող սահմանված նմուշի վկայականների հանձնման արարողությանը,

4) ըստ անհրաժեշտության՝ ապահովում է վերապատրաստման ծրագրի լրամշակման համար Եվրոպական փորձագիտական շրջանակների օժանդակությունը:

2.3 Նախարարությունը՝

1) ՀՊԾՄ-ի հետ համատեղ մշակված ժամանակացույցին համապատասխան՝ կազմակերպում է համայնքային ծառայողներին (յուրաքանչյուր վերապատրաստմանը 14-20 համայնքային ծառայող) վերապատրաստման համար անհրաժեշտ պաշտոնական հայտերի ներկայացումը,

2) ԵԱՀԿ և ՀՊԾՄ հետ համատեղ վերապատրաստումը հաջողությամբ ավարտած համայնքային ծառայողներին տրամադրում է սահմանված նմուշի վկայականներ,

3) իր մասնագիտական ռեսուրսներից, յուրաքանչյուր մոդուլով վերապատրաստումն իրականացնելու նպատակով գործուղում է 2 դասախոս, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ ապահովում է վերապատրաստման ծրագրի լրամշակման համար իր մասնագիտական ռեսուրսներից մասնագետների օժանդակությունը.

4) վերապատրաստման գործընթացի հաշվետվության արդյունքներով մասնակցում է կատարված աշխատանքների և ձեռքբերումների հանրայնացմանը:

2.4 ՀՊԾՄ –ն՝

1) իրականացնում է վերապատրաստման համար անհրաժեշտ վարչական կառավարման գործընթացը.

2) ապահովում է դասատախտակների կազմումը և ուսումնական գործընթացը՝ ստացված հայտերի շրջանակներում.

3) Նախարարության հետ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևավորում է վերապատրաստվողների կազմն ըստ կրթական ծրագրերի և խմբերի.

4) իր փորձագիտական ռեսուրսներից, յուրաքանչյուր մոդուլով վերապատրաստումն իրականացնելու նպատակով գործուղում է երկու դասախոս, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ ապահովում է վերապատրաստման ծրագրի լրամշակման համար իր փորձագիտական ռեսուրսներից փորձագետների օժանդակությունը.

5) իրագործում է վերապատրաստվողների շարժի վերաբերյալ տեղեկանքի նախապատրաստում, հաշվառում և դրա ներկայացումը Նախարարության հաստատմանը,

6) իրականացնում է ուսուցման որակի և արդյունավետության վերաբերյալ վերապատրաստվողների հարցումների կազմակերպում և վերլուծում, ինչպես նաև մատուցված նյութի յուրացման և իրացման մակարդակը պարզաբանող ֆոկուս խմբերի աշխատանքների կազմակերպում,

7) նախապատրաստում է ընթացիկ և տարեկան վերապատրաստումների ծրագրային ու ֆինանսական հաշվետվությունները և դրանք ներկայացնում է ԵԱՀԿ,

8) վերապատրաստման գործընթացի հաշվետվության արդյունքներով մասնակցում է կատարված աշխատանքների և ձեռքբերումների հանրայնացմանը:

Հոդված 3

Համագործակցության և աջակցության այլ ձևերը

3.1 Սույն Հուշագրով սահմանված համագործակցության շրջանակներում Կողմերի մասնակցությամբ կարող են կազմակերպվել պարեքարաբար աշխատանքային քննարկումներ, այդ թվում՝ վերապատրաստման ծրագրի ընթացքում մատուցված նյութի յուրացման և իրացման մակարդակը պարզաբանող ֆոկուս խմբերի համեմատական վերլուծության արդյունքներով ուսուցման որակի կատարելագործման և արդյունավետության վերաբերյալ:

3.2 Հուշագիրը չի բացառում Կողմերի համաձայնությամբ ընտրված համագործակցության այլ ձևերի հնարավորությունը (սեմինարներ, կոնֆերանսներ և այլն), որոնք սահմանված չեն սույն Հուշագրում, սակայն համապատասխանում են սույն Հուշագրում սահմանված նպատակներին: Խրախուսվում է նաև համագործակցությունն այլ միջազգային կազմակերպությունների և համապատասխան շահառուների հետ:

Հոդված 4

Համագործակցության համակարգումը

Սույն Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված ներկայացուցիչների միջոցով:

Հոդված 5

Տարաձայնությունների կարգավորումը

5.1 Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից ծագող բոլոր տարաձայնությունները Կողմերի միջև կարգավորվում են բարեկամաբար, բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

5.2 Եթե կողմերին չհաջողվի վեճը լուծել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունները սկսելուց հետո վաթսուհին (60) օրվա ընթացքում, ապա վեճը պետք է լուծվի արբիտրաժային դատարանի միջոցով՝ UNCITRAL արբիտրաժային կանոններին համաձայն:

Հոդված 6

Անձեռնմխելիությունը

Հուշագրում պարունակվող որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես ԵԱՀԿ-ի և նրա պաշտոնատար անձանց արտոնություններից և անձեռնմխելիությունից հրաժարում:

Հոդված 7

Փոփոխությունները և լրացումները

Սույն Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը և դադարեցումը

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Այս Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Հուշագիրը դադարեցնելու դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտվեն:

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2016 թվականի մայիսի 19-ին վեց բնօրինակով, երեքը՝ հայերեն և երեքը՝ անգլերեն: Երկու տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը: